ԺԱՆՏԱԽՏԻ ԴԻՄԱԿԸ

ԷԴԳԱՐ ՊՕԷ-ի

Կարմիր մահ անուանուած ժանտախտը վաղուց արդէն ճարակել էր երկիրը։ Երբէք դեռ տեղի չէր ունեցած այդպէս սարսափելի, կատաղի մահ։ Նորա առաջին նշանը լինում էր արիւն, վարդագոյն յորդառատ արիւն։

Հիւանդութիւնը սկսւում էր սաստիկ ծակոցքից, յանկարծակի դլխացաւից, որ տեղի էր տալիս արիւնահոսութեան մարմնի բոլոր մասերից։ Մարմնի և նա մանաւանդ երեսի և ձեռքերի վերայ երեւացող կարմիր բծերը ջնջում էին զոհին մարդկութեան ցուցակից և զրկում էին այնուհետև նորան օգնելուց և համակրութիւնից։ Հիւանդութեան սկիզբը, զարգացումը մինչև վերջը տևում էր ոչ աւելի, քան կէս ժամ։

Բայց իշխան Պրոսպերոն երջանիկ, հնարագէտ և ձեռնարկու մարդ էր։ Երբ որ նորա իշխանութեան մէջ սկսեց ժողովուրդը կոտորուել ժանտախտից, նա հրաւիրեց իւր բարեկամներից՝ քաջ և զւարճասէր ասպետներից և պալատական տիկիններից մինչև հազար մարդ և տոցա հետ մեկուսացաւ իւր ամրոցներից մէկը։

Ամրոցը ահագին, հոյակապ մի շինութիւն էր, արքայական մեծասքանչ ճաշակով։ Նա շրջապատած էր բարձր և հաստ պարիսպով։ Երկաթեայ դռները պահպանում էին ամրոցի մուտքը։ Այդ դռները զրահաւորուած էին հաստ և մեծ նիգերով, որպէս զի արտաքին աշխարհի ցաւերը և յուսաբէկութիւնը չ՝մտնեն ամրոցի ներսը, ուր ժողովուած էր առատ ուտելապաշար երկայն ժամանակի համար։

Այգպիսի նախաղգուշութիւնների շնորհիւ՝ ամրոցականները կարող էին ուշք չդարձնել ժանտախտի վերայ։ Արտաքին աշխարհը թող ինքը հոգար իւր անելիքը այդ դժբաղդ օրերում։

Մի՞թէ անմտութիւն չէր լինիլ նստել երկայն և տխրել, կամ ուրիշ մտատանջութիւնների ենթարկուել։ Իշխանը հոգացել էր նաև զարճութիւններ աւելացնելու միջոցների մասին։ Նա ունէր և ծաղրածուներ, և յանպատրաստից ճառախօսներ, և պարողներ և երաժիշտներ և գինի։ Ամրոցում կային բոլոր այս լաւ առարկաները և ասպահովութիւնը։ Նորանից արտաքսուած էր կարմիր մահը։

Ամրոցի բաղդաւորների կղզիանալուց հինգ թէ վեց ամսուայ վերջումը, մինչդեռ ժանտախտը արտաքին աշխարհում աւելի մեծ կատաղութեամբ լափում էր իւր զոհերը, իշխան Պրոսպերօն իւր երջանիկ ոգևորութեան մէջ յայտարարեց իւր բարեկամներին՝ որ նա կազմում է շքեղ դիմակահանդէս։

Ի՞նչ հրաշալի պատկեր էր ներկայացնում այս դիմակահանդէսը։ Ես ձեզ համար կը նկարագրեմ նախ այն դահլիճները, որտեղ նա կատարւում էր։ Թւով նոքա եօթն էին։

Շատ պալատներում դահլիճները ձգուած են մէկը միւսի ետևից ուղիղ գծով, այնպէս որ մարդու աչքը կարող է միանգամից տեսնել մի ծայրից միւս ծայրը բացուած դռների միջով։ Իսկ այստեղ բոլորովին ուրիշ կերպ էր, ինչպէս և սպասել պէտք էր իշխանի արտասովոր և ինքնահաճ ճաշակից։ Դահլիճները այնպէս անկանոն էին նախագծուած, որ մի դահլիճից միւսը չէր երևում։ Ամենայն մի պատի միջում՝ թէ աջ և թէ ձախ կողմից՝ բացուած էր բարձրադիր և նեղ պատուհան, որ նայում էր այն միջանցքներին, որոնցով շրջապատուած էին դահլիճները։

Պատուհանների ապակիները համապատասխանում էին պատի պաստառների գոյնին։ Արևմտեան դահլիճը, զորօրինակ, կապտագոյն էր, և պատուհանների ապակիներն էլ կապոյտ էին։ Երկրորդ դահլիճը ծիրանագոյն պաստառներով էր ծածկուած և ապակիներն էլ նոյն գոյնի էին։ Երրորդի թէ պաստառները և թէ ապակիները—կանաչագոյն էին։ Չորրորդը՝—նարնջագոյն, հինգերորդը—սպիտակ, վեցերորդը—մանիշակագոյն։ Եօթներորդ դահլիճը՝ բոլորը՝ պատած էր սև թաւիշով առանց բառառութեան։ Օճառքը նոյնպէս թաւշ-

պատ էր. յատակի գորգերը նոյնպէս սև։ Բայց այս գահլիճի պատուհանների գոյնը չէր համապատասխանում պաստառին։ Ապակիները կարմիր էին, արիւնագոյն։

Այս եօթն դահլիճների պատերը ոսկեզօծած էին առատ կերպով։ Բայց նոցա մէջ եղողին չէին երևում ոչ լամպարներ, ոչ կանթեղներ, ոչ ճրագներ։ Միայն՝ դալիճները շրջապատող միջանցքներում՝ իւրաքանչիւր պատուհանի հանդէպ՝ բարձր և մեծ եռոտանու վերայ՝ դրուած էր մի մեծ կրակարան, որից լոյսի ճաճանչները խուրձ-խուրձ անցնում էին գունաւոր ապակիների միջով դահլիճները ներսը։ Այս տեսակ լուսաւորութիւնը տալիս էր դահլիճներին կախարդական բնաւորութիւն։ Սևապատ դահլիճում լոյսը կարմիր ապակիների միջով անցնելով և սև թաւիշի վերայ տարածուելով՝ տալիս էր նորան մեայլ տեսք և դահլիճի մէջ մտնող համարձակների երեսը լուսաւորում էր այնպիսի չարագուշակ գոյնով, որ պարողներից շատ սակաւներն էին մտնում այդ գիւական սենեակը։

Սև դահլիճի արևելեան պատին զետեղուած էր ահագին մեծութեան սևագոյն պատի ժամացոյց։ Նորա ճօճանակը կանոնաւոր շարժւում էր, խուլ և ծանր չխկոցներով և երբ բոպէացոյց սլաքը բոլորում էր շրջանը և ժամացոյցը սկսում խփել, մեքենայի երկաթեայ թոքերից դուրս էր գալիս մի զիլ, պարզ, թանձր, չափազանց ներդաշնակ և սակայն այնպէս օտարոտի սաստիկ թափանցող ձայն, որ ամեն անգամ երաժիշտները ստիպւած էին լինում կանգ առնել և սպասել մինչև ժամացոյցի սարսափելի ձայնը դադարէր։ Այդ բոպէներին՝ պարողները ընդհատում էին իրանց պարը և մի յանկարծակի խառնաշփոթութիւն էր տիրում բոլոր հասարակութեան։ Ժամացոյցի ձայնից գունատւում էին ամենաանհոգ և ուրախ ասպետներն անգամ... Նա երբ ժամացոյցի վերջին ձայնը խլանում էր, նորից հասարակութիւնը կենդանանում էր, երաժիշտները ժըպտալով նայում էին միմիանց երեսին՝ ցանկանալով կարծես դորանով յայտնել, որ անցաւ ծանր բոպէն և այլ ևս չի կրկնուիլ։ Բայց վաթսուն բոպէից յետոյ նորից սկսւում էր նոյն վրդովմունքը և բոլոր հասարակութեանը տիրում էր նոյն շփոթութիւնը։

Զը նայելով այդ բոլորին՝ տօնախմբութիւնը ուրախ էր անցնում։ Իշխանի ճաշակը օտարոտի էր։ Նա ինքն իւր ճաշակով կարգաւո-

ռում էր գոյները և առում էր ընթացիկ նորաձևութիւնները։ Նորաձևի մէջ երևում էր մի ինչ որ համարձակ և վայրենի բան։ Շատերը նորան այդ պատճառով խելագար էին անգամ ենթադրում։ Բայց պալատականները քաջ գիտէին, ի հարկէ, որ դա սխալ ենթադրութիւն է։ Բաւական էր իշխանի հետ փոքր ինչ տեսակցել, խօսել՝ համոզելու, որ իշխանը՝ խելքը գլխին մարդ է։

Ինքնքը շքեղացնելու դիտմամբ՝ իշխանը ինքը ներկայ էր եղել բոլոր պատրաստութիւններին և ամէն բան սարքել էր իւր ճաշակի համաձայն։ Պատերի վերայ նա տեղաւորել էր օտարոտի նկարներ, որոնք շատ սարսափելի և մինչև անգամ զզուելի կերպարանքներ էին ներկայացնում։ Կարծես թէ՝ դա մի երազի աշխարհք էր պատրաստուած արթուն հանդիսականների համար։

Դիմակահանդէսը փայլում է...

Բայց ահա՝ ժամանակ առ ժամանակ հնչում է սև ժամացոյցի ձայնը սև դահլիճից։ Մի վայրկեան բոլորը կանգ է առնում, դադարում և լռում՝ բացի ժամացոյցի զանգից։ Մտածողութիւնները սառչում են, ճնշում։ Ժամացոյցի ձայնը սակայն հանգչում է և կրկին վերանորոգում է ուրախութիւնը, կրկին դղրդում է երաժշտութիւնը և կրկին սահում են պարողները լուսաւորուած գունաւոր ապակիներից...

Ոչ ոք, ո՛չ մի դիմակ չէ համարձակւում այլ ևս մտնել արևելեան դահլիճ, որովհետև սկսում է մթնանալ դուրսը և կարմիր ապակիներից անցնող լոյսը աւելի ևս սարսափելի է դառնում. իսկ սև ժամացոյցի ձայնը կարծես աւելի դղրդացող և հանդիսաւոր...

Բոլոր միւս դահլիճները լիքն են մարդկանցով և կեանքը այնտեղ եռում է... Բայց ահա հասաւ կէս գիշերը, սկսեց ժամացոյցի ձայնը... Երաժշտութիւնը դադարեց, պարողները կանգ առին։ Ամենքին՝ ինչպէս և առաջ՝ տիրեց վրդովմունքը։ Այս անգամ ժամացոյցը պէտք է խփէր տասն և երկու։ Հանդիսականների գլխով շատ մտքեր անցան։ Դուցէ հէնց այդ երկայն ժամանակի շնորհիւն էր, որ մի քանի անձեր նկատեցին մի դիմակ, որի վերայ մինչև այդ ժամանակը ոչ ոք ուշադրութիւն չէր դարձրել։ Այդ դիմակի տեսքը պատճառեց զարմանք, որ շատ շուտով փոխուեց սարսափի։

Անշուշտ՝ պէտք է մի անսովոր բան երևեցած լիներ, որ այդ

ազատ և անհոգ հասարակութեան մէջ վրդովմունք կարողանար գցել։ Խնջոյքի ազատութիւնը անսահման էր. բայց երևի՝ նոր դիմակը յանդգնել էր անցնել այդ ազատ սահմաններից էլ...

Ամենաանհոգ մարդու սրտումն անգամ՝ կան լարեր, որոնց դիպչելը անպատիժ չէ անցնում։ Ամենաստոր մարդկանց համար, որոնք սովոր են կեանքի և մահի հետ խաղալ, կան այնպիսի առարկաներ, որոնցով նոքա չեն համարձակւիլ խաղալ։

Հանդիսականները, ըստ երևոյթին բոլորը՝ զգացին անծանօթ դիմակաւորի թէ զգեստի և թէ վարմունքի անպատկառութիւնը և անքաղաքավարութիւնը։ Դա—մի բարձրահասակ, կմախքացած անձ էր, գլխից մինչև ոտները պատանքում փաթաթած։ Երեսին դրած դիմակը զարմանալի հմտութեամբ պատկերացնում էր լուծուող դիակի գծերը։ Ներկայ եղողները, ի հարկէ, կը ներէին այդպիսի յիմար կատակը, եթէ միայն դիմակը ներկայացնում չը լինէր կարմիր-մահ ժանտախտը։ Պատանքը աղտոտուած էր արիւնով. լայն ճակատը և բոլոր երեսը կարմիր բծերով պատած էին...

Երբ իշխան Պրոսպերօն նկատեց դիմակը, որ հանդարտ և սիգաճեմ անցնում էր պարողների միջով, աւաջ՝ դողաց սարսափից և զզւանքից, բայց յետոյ զայրոյթից կատաղեց։

—Այդ ո՞վ է, ո՞վ, աղաղակեց նա խեղդուած ձայնով իրան շրջապատող պալատականներին, ո՞վ է, որ յանդգնում է մեզ վիրաւորել այդպիսի սրբապիղծ ծաղրածութիւնով։ Բռնեցէ՛ք նորան և պոկեցէք նորա դիմակը, որպէս զի մենք գիտենանք թէ՝ ումն ենք կախ տալու այսօր արևագալին։

Այս դէպքը տեղի ունեցաւ արևմտեան կապոյտ դահլիճում։ Իշխանի գոռ խօսքերը բարձրաձայն և պարզ կերպով լսեցին բոլոր եօթն դահլիճներումն էլ։ Երաժշտութիւնը լռեց։

Իշխանը կանգնած էր կապոյտ դահլիճում, շրջապատուած գունատուած պալատականներով։ Ամբոխի մէջ սկզբում մի շարժում երևաց դէպի չար ոգին. իսկ սա յամրաքայլ և հանդիսաւոր կերպով մերձենում էր իշխանին։

Դիմակի անմիտ յանդգնութիւնը կատաղի սարսափ տարածեց բոլոր հասարակութեան վերայ և ոչ ոք չէր վստահանում նորան բռնել։ Իսկ դիմակը, ստիպելով ամբոխին՝ նորա համար ճանապարհ

բաց անելու, անցաւ կապտագոյնը և այլն։ Ոչ ոք չէր համարձակ-ւում նորան արգելք լինելու։

Բայց ահա իշխան Պրոպերծն ընկաւ դիմակի ետևից՝ անցնելով բոլոր վեց դահլիճները։ Հանդիսականներից ոչ ոք սիրտ չ'արաւ հետևելու նորան։ Իշխանը շարժում էր իւր մերկացրած դաշոյնը հեռացող դիմակի ետևից։ Բայց չար ոգին, հասնելով սև դահլիճին, կանգ առաւ և երեսը դարձրեց դէպի իրան հալածողը։ Ցանկարծ լուեց թափանցիկ աղաղակ. դաշոյնը, փայլելով, ընկաւ սև գորգի վերայ և իշխան Պրոպերծն գետին տարածուեց մեռած։

Ամբոխը թափուեց սև դահլիճը և բռնեց անծանօթին, որ կանգնած էր դիք և անշարժ սև ժամացոյցի ստուերում։ Բայց սարսափը տիրեց բոլորին, երբ պատանքի մէջ չ'երևաց ոչ մի շօշափելի առարկայ։ Բոլորը հասկացան, որ դա կարմիր-մահի ուրուականն է... Եւ բոլոր հանդիսականները այդ սարսափից վայր ընկան և բոլորը մեռան այն դրութեան մէջ, ինչպէս նոքա ընկնում էին։

Սև ժամացոյցի կեանքը վերջացաւ ամրոցականների վերջինի կեանքի հետ։ Եւ եռոտանիների կրակը հանգաւ և այնուհետև խաւարը, աւերը և կարմիր-մահը տարածեցին ամեն բանի վերայ իրանց անսահման իշխանութիւնը։